Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 168 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալական պայմանների բարելավման և էներգախնայողությունը ապահովելու նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան խոշորացված համայնքի Բերքաբեր բնակավայրի թվով 38 կարիքավոր ընտանիքների համար անհատույց արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան խոշորացված համայնքի Բերքաբեր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ տանիքին անհատույց 3 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային /On GRID/ կայանի տեղադրում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան խոշորացված համայնքի Բերքաբեր բնակավայր բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	16,092,600 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	Բերքաբեր բնակավայրի թվով 38 կարիքավոր ընտանիքներ և Բերքաբեր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի մարտի 6-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 27-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Բերքաբեր բնակավայրի թվով 38 կարիքավոր ընտանիքների համար արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում՝ 15,003,600 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մարտի 6-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 27-ը: 2. Բերքաբեր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ տանիքին 3 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում՝ 1,089,000 դրամ արժողությամբ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մարտի 6-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 27-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Նախատեսվում է 38 բնակիչների տան տանիքներին կատարել ամրակցման, ջրատաքացուցիչ կայանների ոտնակների և ջրատաքացուցիչների տեղադրման, էլեկտրամալուխների անցկացման և մալուխների միացման, ջրամատակարարման խողովակների անցկացման և ջրատաքացուցիչ կայաններին միացման աշխատանքների իրականացում: Արժեքը՝ 15,003,600 դրամ: 2. Նախատեսվում է մանկապարտեզի տանիքին կատարել ամրակցման, ֆոտովոլտային կայանի ոտնակների և կայանի տեղադրման, հողանցման, էլեկտրամալուխների անցկացման և հոսանքի վահանակին միացման աշխատանքների իրականացում: Արժեքը՝ 1,089,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ Տավուշի մարզպետարան, Բերքաբեր համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություն-ներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

02.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ